

Ավտովթարների գրանցման կարգը ԱՊՊԱ համակարգում

ԱՊՊԱ ոլորտում գործում է ավտովթարների գրանցման հետևյալ համակարգը.

1. Ավտովթարների պարզ գրանցում համաձայնեցված հայտարարագրի միջոցով

Համաձայնեցված հայտարարագրի միջոցով կարելի է գրանցել ավտովթարը, եթե՝

- վթարին մասնակից են միայն երկու ավտոմեքենաներ, և վնաս է պատճառվել միայն այդ ավտոմեքենաներին կամ դրանցից մեկին,
- վթարում ներգրավված երկու ավտոմեքենաներից առնվազն մեկի համար առկա է գործող ԱՊՊԱ պայմանագիր,
- վարորդներից մեկն ընդունել է իր ամբողջական մեղավորությունը,
- տուժող վարորդի պահանջը մեղավոր վարորդի նկատմամբ չի գերազանցում 100.000 դրամը:

Ավտովթարների պարզ գրանցման դեպքում անհրաժեշտ է, որպեսզի վարորդները ձեռնարկեն հետևյալ հաջորդական գործողությունները՝

- առնվազն երեք անգամ լուսանկարեն բախված ավտոմեքենաների փոխադարձ դիրքերն ու վնասվածքները,
- լրացնեն և ստորագրեն համաձայնեցված հայտարարագիրը,
- ազատեն ճանապարհի երթևեկելի մասը,
- տեղի ունեցած ավտովթարի մասին հեռախոսով տեղեկացնեն մեղավոր վարորդի ապահովագրական ընկերությանը՝ ներկայացնելով համաձայնեցված հայտարարագրում լրացված տեղեկությունները:

Համաձայնեցված հայտարարագրի ձևը և այն լրացման հրահանգը բեռնելու համար այցելեք հետևյալ հղումով՝ http://paap.am/index.php?al=agreed_declaration:

Ուշադրություն՝ Ավտովթարների պարզ գրանցման համակարգի դեպքում՝

- լուսանկարների համար որևէ տեխնիկական և որակային պահանջներ սահմանված չեն, բավական է, որպեսզի այդ նկարները բավարար տեսանելիությամբ արտացոլեն ավտոմեքենաների փոխադարձ դիրքերն ու վնասվածքները,
- պատահարը հնարավոր է գրանցել և ճանապարհի երթևեկելի մասը վերականգնել ոչ ավել, քան 10 րոպեի ընթացքում:

2. Համաձայնեցված հայտարարագրով կարգավորվող վթարներից բացի մնացած բոլոր ավտովթարների գրանցում

Համաձայնեցված հայտարարագրով կարգավորվող վթարներից բացի մնացած բոլոր ավտովթարները գրանցվում են միայն Ճանապարհային ոստիկանության կողմից:

Նման դեպքերում անհրաժեշտ է, որպեսզի վարորդները՝

- վթարից անմիջապես հետո ավտովթարի վայր հրավիրեն Ճանապարհային ոստիկանությանը և հետևեն վերջինիս ցուցումներին,

- մինչև Ճանապարհային ոստիկանության ժամանումը չտեղաշարժեն ավտոմեքենաները և միջոցներ ձեռնարկեն ավտոմեքենաների հետքերն ու առարկաները պահպանելու ուղղությամբ,
- վթարը տեղի ունենալուց հետո առավելագույնը 40 րոպեի ընթացքում հեռախոսով տեղեկացնեն իրենց ապահովագրական ընկերություններին՝ առանց վերջինին սպասելու պարտավորության:
- մասնակցել Ճանապարհային ոստիկանության կողմից սահմանված կարգի փաստաթղթերը կազմելու գործընթացին՝ դրանցում ներկայացնելով իրենց վերաբերող պատասխանները:

Ուշադրություն՝

Այն դեպքում, երբ ավտովթարի արդյունքում պատճառվել են միայն գույքային վնասներ, ապա ճանապարհային ոստիկանության կողմից պատահարի վերաբերյալ վարչական վարույթ կարող է հարուցվել միայն այն դեպքում, **երբ նման պահանջ են ներկայացնում վթարի կողմերը՝** անկախ վթարի հետ կապված վարորդների միջև համաձայնության առկայությունից կամ բացակայությունից: *Ճանապարհային ոստիկանը չի կարող պնդել, որ վթարի հետ կապված պետք է իրականացվի վարչական վարույթ, եթե վթարի կողմ համարվող վարորդները չեն ցանկանում վարույթի իրականացում:* Ընդ որում՝ նույնիսկ վարորդների միջև վեճի առկայության դեպքում, առանց վարչական վարույթի իրականացման գործընթացի շրջանակներում Ճանապարհային ոստիկանության կողմից կազմված պատահարի գրանցման փաստաթղթերը և դրանցով հավաքագրված ելակետային տվյալները լիովին բավարար են, որպեսզի ԱՊՊԱ ոլորտում պատշաճ եղանակով իրականացվի փորձաքննություն և որոշվի պատահարում մեղավոր կողմը (կողմերը):

Կարևոր է հիշել նաև, որ վարչական վարույթի չիրականացման դեպքերում Ճանապարհային ոստիկանության կողմից կազմված պատահարի գրանցման փաստաթղթերը Ճանապարհային ոստիկանությունը միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով փոխանցում է Բյուրոյին և ապահովագրական ընկերություններին՝ պատահարի գրանցման պահից հետո՝ առավելագույնը երկու աշխատանքային օրվա ընթացքում, և այդ փաստաթղթերը ճանապարհային ոստիկանից ստանալու և ապահովագրական ընկերություն կամ Բյուրոյին փոխանցելու պարտավորություն վարորդները չունեն: